

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Արևելագիտության ինստիտուտ  
Институт востоковедения НАН РА  
Institute of Oriental Studies NAS RA

## **ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԿՈՎԿԱՍԸ**

Հանրապետական գիտաժողով՝ նվիրված  
**Կովկասյան Ադուանքում եւ Վրաստանում  
քրիստոնեության ընդունման 1700-ամյակին**  
Երևան, 15-16 դեկտեմբերի, 2015 թ.

**ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՒ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

## **АРМЕНИЯ И ХРИСТИАНСКИЙ КАВКАЗ**

Республиканский симпозиум, посвященный  
**1700-летию принятия христианства  
в Кавказской Албании и Грузии**  
Ереван, 15-16 декабря 2015 г.

## **ДОКЛАДЫ И ТЕЗИСЫ ДОКЛАДОВ**

## **ARMENIA AND CHRISTIAN CAUCASUS**

Republican Conference devoted to the  
**1700-th Anniversary of adoption of Christianity  
in Caucasian Albania and Georgia**  
Yerevan, 15-16 December 2015

## **PAPERS AND ABSTRACTS OF PAPERS**

Երևան Երևան Yerevan  
2015

ՀՏԴ 93/94 : 27 : 06

ԳՄԴ 63.3 + 86.37

Հ 247

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական  
գիտությունների բաժանմունքի բյուրոյի և ՀՀ ԳԱԱ  
Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական հանձնախումբ՝

Ա. Հակոբյան, Ա. Բոգոյան, Ռ. Մաֆրասոյան

**Հ 247 «Հայաստանը և Քրիստոնյա Կովկասը».** Հանրապետական  
գիտաժողով՝ նվիրված Կովկասյան Աղուանքում և Վրաս-  
տանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին. Զե-  
կուցումներ և զեկուցումների դրոյթներ. – Երևան: ՀՀ ԳԱԱ  
«Գիտություն» հրատարակչություն, 2015. – 196 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2015 թ. դեկտեմբերի 15-16-ին Երևանում  
կայացած «Հայաստանը և Քրիստոնյա Կովկասը» հանրապետական  
գիտաժողովի նյութերը: Դրանք նվիրված են Հայաստանին դրկից  
Վրաստանում, Աղուանքում և հարակից երկրներում քրիստոնեու-  
թյան տարածման ժամանակագրությանը, հայ – վրաց – աղուանական  
մատենագրական, քաղաքական և կենցաղ-մշակութային՝ դարերի  
պատմություն ունեցող առնչություններին, քրիստոնեության դերին  
կովկասյան ժողովուրդների հոգեւոր կյանքում և քաղաքական ճակա-  
տագրերում՝ հնում և արդի դարաշրջանում:

Նախատեսվում է հայագետների և արևելագետների համար:

ՀՏԴ 93/94 : 27 : 06

ԳՄԴ 63.3 + 86.37

ISBN 978-5-8080-1191-5

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015

## Վիրքում, Լազիկայում եւ Աղուանքում քրիստոնեության մուտքի ժամանակագրման խնդիրը

Վերջին տարիներին մեր կողմից բաւականին ճշտուած ժամանակագրութեամբ IV դ. առաջին երկու տասնամեակներում, երբ Կովկասեան Աղուանքում քրիստոնէութիւն է տարածուել, այդ երկրի թագաւորն, ամենայն հաւանականութեամբ, եղել է Վաչագան Ա Քաջը (թէպէտ եւ ուշ պատմական աւանդոյթը նոր հաւատի ընդունումը ինչ-որ մի սխալի արդիւնքում վերագրել է Ուռնայր արքային՝ մօտ 338-373 թթ.): Նրա եւ իր Արշակունի արքայատոհմի մասին առաւել մանրամասն պատմող «Վաչագանի վէպ» կոչուող երկի<sup>1</sup> վերջին հատուածներից մէկի ուշադիր քննութիւնը յիշլ է տալիս ենթադրել, որ բնօրինակի այդ տեղում, հաւանաբար, յիշատակուած է եղել ոչ թէ երկի գլխաւոր հերոս Վաչագան Բ Բարեպաշտը, այլ նրա անուանակից վաղ նախնին եւ Աղուանից իրական լուսաւորիչ Վաչագան Քաջը:

«Պատմութիւն Աղուանից»-ի Ա.23 գլխի վերջնամասում հեղինակը պատմում է, որ Ամարասում մեծ դժուարութեամբ յայտնաբերուած Գրիգորիսի նշխարները մասամբ թողնուում են տեղում, մասամբ յանձնուում արքայական «բանակին» (զրա մէջ հասկացուում է ոչ միայն զօրքը, այլեւ հոգեւորականների եւ արքունական ծառայողների՝ Ամարասում հաւաքուած հոծ բազմութիւնը), որն սկսում է իր վերադարձի երթը դէպի թագաւորի «սեփհական» Դիւտական գիւղը (Քարուէճ ամառանոցով եւ Ուտիացւոց-Աւտէացւոց

---

<sup>1</sup> VI դարի ամենակարգում շարադրուած եւ X դ. վերջի պատմիչ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում (հրատ.՝ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, ՔԱՃ. քննադիր եւ ներածութիւնը Վ. Առաքելյանի, Եր., 1983, լետայտու՝ Դասխ.) բառացի արտագրուած այս աղբիւրի մասին տե՛ս Յակոբեան Ա., «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում, – «Համադէս ամսօրեայ», ԾԺԷ տարի, Վիեննա-Եր., 2003, սն. 45-142: Մենք ենք հրատարակել նաեւ քննական քննադիրը (Անանուն, Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի, Առաջաբանը եւ գիտա-քննական քննադիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, Անթիլիաս, 2004, էջ 51-112):

գաւառի դաշտավայրով): Այս նկարագրութեան մէջ անսպասելիօրէն, ենթատեքստային նախադասութիւններէ մէջ մէկընդմէջ յայտնուում են երկուեր՝ «լուսաւորիչ արքայ Վաչագանի» զնահատականի եւ նրա նախնիների մասին. «Ապա չուէր բանակն ամենայն առաջին կարգադրութեամբն եւ սրբոցն դասիւք: Անդանաւր բարեացապարտն Վաչագան արքայ զհոգեւորականն եւ զգերաշխարհիկն զոյն աւար առեալ, որ էր անանց եւ անպատմելի բարեացն առիթ նմա, զոր նախ եղելոց թագաւորացն նախ քան զնա իւր իսկ նախնեացն ոչ ումեք համբարեցաւ այսպիսի մեծաւքանչ պարգեւք: Եւ քրիստոսաժողով բանակին աւարամասն առեալ զողորմութեանցն Աստուծոյ զբերումն անճառաբար ստանային ի ձեռն քրիստոսազգեստ արքային Վաչագանայ, զորոյ գովութիւնն ոչ ինչ նուազ գով վարկանիւմ, քան զարեւտականին տիրող Կոստանդիանոսի կայսեր կամ զԱրչակունին Տրդատիոս՝ Մեծաց Հայոց փրկութեան գտող: Որ եւ մեզս արեւելեացս, սա՛ եղեւ դուռն լուսոյ աստուծագիտութեան եւ բազմազան բարեաց աւրինակ երջանիկն այն [a ձեռ. երջանիկս այս]: Սա մեծապէս ելեալ ի հանդէսս յայս՝ դառնայ, ըստ որում զգալն էր պատրաստեալ նոյնգունակ եւ առաւելագոյն եւս հայեցուցանող պայծառութեամբ զճանապարհն յաւրինեալ»<sup>1</sup>: Եթէ այդպիսի «խառնուածութիւնն» ընդունենք իբրեւ երկու տարբեր սիւժէների (բանակի երթի եւ մասունքների յայտնաբերման շնորհին արժանացած Վաչագան Բարեպաշտի գովաբանութեան) մէկընդմիջուած շարադրանք, ինչպէս որ իր բնագիրը հասկացել է Մովսէս Դասիւրեանցին (կամ անգամ նախորդ գրիչներից մէկը), ապա միեւնոյնն է, անսպասելի պէտք է համարել երկրորդ ընդգծուած հատուածում Վաչագանի համեմատութիւնը շուրջ երկու դար առաջ ապրած եւ իրենց երկրներն առաջին անգամ դարձի բերած Կոստանդիանոսի եւ Տրդատ Մեծի հետ:

Բայց թւում է, թէ սա պարզապէս չափազանցուած գովաբանական զեղում չէ. քիչ վերեւում թագաւորի նախնիների յիշատակումը (առաջին ընդգծուած կտորում) եւ ապա նորից «քրիստոսաժողով բանակի» մասին խօսելը թոյլ է տալիս մտածել, որ բանակի մասին վերջին արտայայտութիւնն ուղղակի իր տեղում չէ: Այսինքն ենթադրելի է, որ դրա փոխարէն «Վէպ»-ի բնագիրն ունեցել է ուրիշ բառեր, որոնցով երկրորդ ընդգծուած միտքը արամաբանօրէն կապուել է առաջինի հետ: Դժուար չէ կռահել, որ այդ բառերով պիտի արտայայտուած լինէր «բացի ...» միտքը, որով մա-

<sup>1</sup> Դասիւս., Ա.իգ, էջ 83; «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, էջ 109:

սուևքների զիւտի շնորհին արժանացած բարեպաշտ արքան համեմատուել էր երկնային մէկ այլ շնորհի արժանացած, այն է՝ Ադուանքը դարձի բերած իր նախնու՝ Վաչագան Քաջի հետ, որն էլ այնուհետեւ շատ տեղին համեմատուել է (երկրորդ ընդգծուած մտքում) Կոստանդինոսի ու Տրդատի հետ:

Այժմ անդրադառնանք Ադուանքում քրիստոնէութեան պաշտօնական ընդունման տարեթուի խնդրին: Նոր գրականութեան մէջ բաւականին մանրամասն պարզաբանուած է, որ Հայաստանում քրիստոնէութեան պաշտօնական ընդունումն իրագործուեց Գալսերիոս կայսեր (305-311)՝ 311 թ. Ապրիլի 30-ին (իր մահուանից 5 օր առաջ) Թրակիայի Սարդիկէ քաղաքում հրապարակուած «Հանդուրժողութեան մասին» հրովարտակից (էպիտոխից) 1,5-2 ամիս անց (Գրիգոր Լուսաւորչի «Ելն ի վիրապէ», որը 311-ին ընկնում էր Յունիսի 24-ին): Այդ մասին ամենից մանրամասն դեռ 1969 թ. գրել է Մարի-Լուիզ Շօմոնը<sup>1</sup>, որին միայն վերջին մէկուկէս տասնամեակում հետեւեցին Ժան-Պիեռ Մահէի, Արամ Մարտիրոսեանի, Կարէն Իզգբաշեանի եւ մեր անդրադարձերը<sup>2</sup>: Հայաստանում քրիստոնէութեան ընդունմանն, ըստ Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութեան»՝ 311-312 թթ. ձմռանը հետեւեց արեւելեան պրովինցիաներին տիրող կայսերակից Մաքսիմինոս Դայայի «ամոթալի» պատերազմը Հռոմի «բարեկամ եւ դաշնակից» քրիստոնեայ հայերի (իմա՝ Հայաստանի) դէմ, նշուած պրովինցիաների քրիստոնեաների դէմ նրա վերսկսած հայածանքների ընթացքում: Բնագիրն է. «Յարեաւ եւ պատերազմ ի բռնաւորէն ընդդէմ Հայոց, որք ի սկզբանէ անտի բարեկամք եւ մարտակիցք էին Հռոմոց. զորս քրիստոնեայս եւ յերկրպագութիւն ճշմարտին Աստուծոյ փոյթմ

<sup>1</sup> **Chaumont M.-L.**, *Recherches sur l'histoire d'Arménie de l'avènement des Sassanides à la conversion du royaume*, Paris, 1969, p. 147-164 (գլուխ VII – «Le sacre à Césarée et le baptême à Bagawan»); **Շօմոն Մ.-Լ.**, Գրիգոր Լուսաւորչի ձեռնարկութիւնը Կեսարիայում եւ մարտութիւնը Բագաւանում [Թարգմ. եւ ծանօթագրումները **Ն. Ղարիբեանի** եւ **Ա. Յակոբեանի**], – «Հանդէս ամսօրեայ», ԾԻԸ տարի, Վիեննա-Եր., 2013, սն. 29-31:

<sup>2</sup> **Mahé J.-P.**, *Die Bekehrung Transkaukasiens: eine Historiographie mit doppeltem Boden*, – Die Christianisierung des Kaukasus (Armenia, Georgia, Albania). Referate des Internationalen Symposions (Wien, 9-12 Dezember 1999), S. 111; **Mardirossian A.**, *Le Synode de Vagarshapat (491) et la date de la conversion au christianisme du royaume de Grande Arménie (311)*, – REArm., NS, T. 28, Paris, 2001-2002, p. 249-260; **Իզգբաշեան Կ.**, *Հայագիտութեան ներածութիւն*, Եր., 2006, էջ 12:

նեղելով բռնաւորին ատելոյն Աստուծոյ, զի կոոց եւ դիւաց զոհեցեն, փոխանակ բարեկամաց՝ թշնամիս, եւ փոխանակ նիզակակցաց՝ պատերազմողս ընդդէմ իւր յարոյց զնոսա... Արդ նա Հանդերձ գաւրաւք իւրովք ի պատերազմի անդ ընդդէմ Հայոց՝ ի բազում ուրեք հարեալ վատթարէր առաջի նոցա»<sup>1</sup>:

Իհարկէ, պէտք է նշել, որ գրականութեան մէջ շարունակուած է նաեւ Հայոց դարձի ինչպէս աւանդական՝ 301/302 թուականի շրջանառութիւնը, որի փաստարկումներն ամենից համակարգուած ձեւով շարադրել է Մաղաքիա Օրմանեանը<sup>2</sup> (ի դէպ, պէտք է յիշել, որ այս թուագրումը, որը պաշտօնապէս ընդունուած է ՀՀ պետական կառոյցներում եւ Հայ Առաքելական եկեղեցում, ոչ թէ դալիս է նոր ժամանակի գրականութիւնից, այլ թէկուզ եւ վրիպմամբ հաշտարկուել ու սրբազործուել է, ըստ ամենայնի՝ VII դ. սկզբներին, թերեւ՝ Վրթանէս Քերթոզի կողմից), այնպէս էլ Պօղոս Անանեանի տեսակէտի կրկնութիւնը, ըստ որի Լուսաւորիչը Վիրապից ազատուել է Կեսարիայում Ղեւոնդիոս արքեպիսկոպոսի գլխաւորած եկեղեցական ժողովում ձեռնադրուելուց (314 թ. Սեպտեմբեր, արդէն 313 թ. Միլանի էզիկտից յետոյ, որով Կոստանդիանոս Մեծը եւ Լիկիւնիոսը քրիստոնէութիւնը պաշտօնապէս հռչակեցին կայսրութիւնում ընդունելի կրօն) ոչ շատ առաջ, այսինքն՝ նոյն թուականի նախորդող ամիսներին<sup>3</sup>: Շարունակում են ի յայտ գալ նաեւ փորձեր փաստարկելու այլ թուագրումների հնարաւորութիւնը, ինչպէս, օր.՝ Ռուբէն Մանասէրեանի եւ Բաբէկէն Յարութիւնեանի աշխատանքներում է, ովքեր Հայոց դարձը դնում են 305-306 թթ.<sup>4</sup>, կամ Մաքսիմ Եւաղեանի երկհատոր մենագրութեան մէջ, որը դնում է 294-296 թթ.<sup>5</sup>: Սակայն նշուած հեղինակները պարզապէս

<sup>1</sup> Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն Եկեղեցւոյ, Վեներտիկ – Ս. Ղազար, 1874, էջ 688-689 (զիրք Թ, գլ. Ը):

<sup>2</sup> Օրմանեան Մ. արքեպ., Ազգապատում, հո. Ա, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2001, ս. 77-101 § 49-66:

<sup>3</sup> Անանեան Հ. Պ., Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, Վեներտիկ – Ս. Ղազար, 1960 (վերահրատ.՝ 1998):

<sup>4</sup> Մանասէրյան Ռ. Ս., Հալաստանը Արտավազդից մինչեւ Տրդատ Մեծ, Եր., 1997, էջ 197-201; Ցարութիւնեան Բ., Ե՞րբ է քրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուել պետական կրօն, – «Հանդէս անսօրեայ», ՃԺԼ տարի, Վիեննա, 2003, ս. 85-195:

<sup>5</sup> Yevadian M.K., *Christianisation de l'Arménie, Retour aux sources*, Vol. II, *L'oeuvre de saint Grégoire l'Illuminateur*, Lion, 2008, p. 365-370.

խոսասփել են Մարի-Լուիզ Շոմոնի փաստարկուսմաների քննարկումից, ըստ որոնց՝ Հայոց դարձը (Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից) տեղի է ունեցել մեզանից 1704 տարի առաջ:

Հայոց, Վրաց եւ Աղուանից դարձի մասին ամենից մանրամասն պատմում է Ագաթանգեղոսի երկի վաղագոյն տարբերակը՝ «Գրիգորի վարք» անունը կրող սկզբնաղբերը, որը մեզ հասել է միայն յունարէն եւ ասորերէն ու նրանցից կատարուած արաբերէն եւ քարշունի թարգմանութիւններով<sup>1</sup>: Դասական բանասէրների կարծիքով՝ «Գրիգորի վարք»-ի թարգմանութեան համար հիմք ծառայած հայերէն բնագիրը շարագրուել է V դ. առաջին կէսում՝ հիմնուած IV դարում յունարէն գրուած մի երկի (պայմանականօրէն կոչուած՝ «Գիրք Գրիգորիսի») վրա<sup>2</sup>, որը որոշ առասպելական տարրերի կողքին մեծ հաւաստիութեամբ ամփոփել է Գրիգոր Լուսավորչի կողմից Հայոց լուսավորութեան իրական գրուագներն ու հանգամանքները: Արդ՝ «Գրիգորի վարք»-ը յայտնում է, որ վճռելով ընդունել Վիրապից դուրս հանուած Գրիգորի քարոզած քրիս-

<sup>1</sup> Յունարէնը տե՛ս Garitte G., *Documents pour l'étude du livre d'Agathange*, Rome, 1946 Ագաթանգեղոսի պատմութեան հունական նորահայտ խմբագրությունը /Վարք/, Թարգմ. հունարէն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, Առաջաբան եւ ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, – «Էջմիածին», 1966, հ<sup>տ</sup> Է, էջ 28-34, հ<sup>տ</sup> Ը, էջ 46-51, հ<sup>տ</sup> Թ-Ժ, էջ 79-87): Նիկ. Մատը դրանից շատ առաջ յայտնաբերել եւ հրատարակել էր արաբերէն թարգմանությունը՝ Март Н., *Крепление армян, грузин, абхазов и аланов святым Григорием (Арабская версия)*, – "Записки Восточного отделения Императорского Русского археологического общества". Т. 16. 1904-1905. Вып. II-III. СПб., 1905, с. 63-211. Հմմ. Տեր-Ղեւոնդյան Ա., *Ագաթանգեղոսի արարական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը*, – ՊԲՀ, 1973, հ<sup>տ</sup> 1, էջ 209-236; Жамкочян А.С., *Житие св. Григория Просветителя Армении по арабской синаяской рукописи 455*, Ер.-Москва, 2009. «Գրիգորի վարք»-ի ասորական եւ քարշունի բնագրերը հրատարակել է Միշել Վան Էսբրոեքը. Esbroeck M. van, *Le résumé syriaque de l'Agathange*, – "Analecta Bollandiana", 1977 (Paris), t. 95, fasc. 3-4, p. 291-358 (աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Տեր-Պետրոսյան Լ. Հ., *Ագաթանգեղոսի ասորական խմբագրությունը*, – «Էջմիածին», 1987, հ<sup>տ</sup> ԺԱ-ԺԲ, էջ 83-89; 1988, հ<sup>տ</sup> Ե-Զ, էջ 44-54, 1989, հ<sup>տ</sup> Դ-Ե-Զ, էջ 90-99); Այլնի՝ Un nouveau témoin du livre d'Agathange, – REArm., NS, T. VIII, Paris, 1971, p. 139-221.

<sup>2</sup> Հմմ. Մուրադյան Պ. Մ., *Ագաթանգեղոսի հին վրացերէն խմբագրությունները*, Եր., 1982, էջ 10:

տոնեական հաւատը, Հայոց Տրդատ թագաւորն իր մօտ է հրաւիրել իր կրտսեր դաշնակից ու բարեկամ Վրաց, Աղուանից (արաբերէն Վարքում ամենուր «Ալանաց») եւ Լազերի (արաբերէն Վարքում առաւելագլխա՝ «Աբխազաց») թագաւորներին: Նրանք ժամանել են Հայաստան, Հայոց թագաւորի ու իշխանների հետ միասին Գրիգորին ձեռնադրուելու համար ճանապարհ դրել Կապադովկիայի Կեսարիա քաղաքը (3000-անոց զօրքի եւ 16 գերազահ «սատրապ»-նախարարների ուղեկցութեամբ, որոնց գլխաւոր էր նշանակուած Արտաւազդ Մամիկոնեան սպարապետը) եւ Հռոմէացիների երկրից վերադարձին դիմաւորել նրան Հայոց արքայական Բագաւան ամառանոցում (Արածանիի վերնահովտում): Կեսարիայում Դեռոնդիոս եպիսկոպոսապետի հրաւիրած եպիսկոպոսական ժողովում Գրիգորն ամենայն հանդիսաւորութեամբ ձեռնադրուեց Հայոց քահանայապետ (այսինքն՝ եպիսկոպոս): Ի դէպ, Կեսարիայի ժողովին մասնակցում էին թուով 20 եպիսկոպոսներ, որոնց անունները այդ նոյն քանակով պահպանուել են «Կանոնագիրք Հայոց»-ում, 325 թ. Նիկիայի տիեզերական ժողովի 318 մասնակիցների ցանկի վերջում «Եւ որք ի Կեսարիայն ժողովեցան» վերտառութեամբ<sup>1</sup>: Ժողովն սկսուել էր 314 թ. Սեպտեմբերի 14-ին՝ Նահատակաց յիշատակի տօնի օրը (հետագայում վերածուած՝ Սուրբ Խաչի տօնի), ինչպէս որ պահանջում էին Առաքելական կանոնները: Վերադարձին Գրիգորի շքախոսմամբ Բարձր Հայքից մեծ շրջան կատարեց դէպի հարաւ, հասնելով Տարօն գաւառ, որի Աշտիշատ քաղաքում Սեբաստիայի եպիսկոպոս Պետրոսի կողմից պաշտօնապէս անցկացուեց նրա գահակալման արարողութիւնը, իսկ յետոյ հիմնադրուեց Մշոյ Սուրբ Կարապետ եկեղեցին, ուր թողնուեցին Կեսարիայից բերուած Յովհաննէս Մկրտչի եւ Աթանագինէսի մասունքները (Հայոց եկեղեցու համար՝ գլխաւոր): Իսկ արդէն Բագաւանի մօտ, Արածանի գետում, 30-օրեայ պահքից յետոյ 370000 հայերի հետ միասին Լուսաւորչի ձեռքով մկրտուեցին նաեւ Վրաց, Աղուանից եւ Լազիկա-Եգերքի թագաւորները:

Դրանից յետոյ Գրիգորը Հայաստանի տարբեր գաւառներ եւ նշուած երկրներ է ուղարկել երէցների ու եպիսկոպոսների: Վիրք-Իբերիա ուղարկուեց Իրինարքոսը, Լազիկա-Եգերք՝ Սուփրոնիոսը, իսկ Աղուանքի համար եպիսկոպոս ձեռնադրուեց եւ ուղարկուեց «բարեպաշտ այր Թովման՝ Սատալա փոքր քաղաքից [Εἶς δὲ Ἀλβανί-

<sup>1</sup> Կանոնագիրք Հայոց, Աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, հտ. Ա, Եր., 1964, էջ 150:



αν Θωμᾶν ὄσιον ἄνδρα. ἐκ τῆν Σαταλέων τῆς μικρᾶς πόλεος]»<sup>1</sup>: Ինչպէս նշել ենք ժամանակին, եթէ Գրիգոր Լուսաւորչի՝ Կեսարիայում քահանայպետ ձեռնադրուելն այս տուեալների հիման վրայ թուագրւում է 314 թ. աշնանով<sup>2</sup>, ապա Աղուանից եւ Վրաց դարձը (Թագաւորների մկրտութիւնը Բագաւանում) ճիշտ կը լինէր թուագրել 315 թուականով<sup>3</sup>, թերեւս, զարնան աւարտով՝ հաշուի առնելով Կեսարիայից մինչեւ Բագաւանի ամառանոց վերադարձող հանդիսաւոր թափորի ճանապարհորդութեան երկատես ելինելը եւ հէնց ամառանոցի հանգամանքը: Այդ երկարատեւութեան մասին, բացի վերը շարադրուած փաստերից, խօսում է նաեւ «Գրիգորի վարք»-ի մի անմիջական զեղումը, թէ ինչպէս էր Լուսաւորչին ուրախացնում այն իրողութիւնը, որ ճանապարհորդութիւնից առաջ ամենուր նրա կանգնեցրած խաչերի տեղում արդէն հասցրել էին եկեղեցիներ կառուցել<sup>4</sup> (իսկ դա, ըստ ամենայնի, 2-3 ամսից հաստատապէս աւելի երկար ժամանակ պահանջող աշխատանք էր):

Թէպէտ «Վարք»-ը Աղուանքի, Վիրքի եւ Լազիկայի դարձը դնում է Գրիգորի՝ Կեսարիայից վերադարձից յետոյ, սակայն Մովսէս Խորենացու բաւական մանրամասն տեղեկութիւնները ստիպում են մտածել, որ կարելի է խօսել գոնէ Վիրքում նոր կրօնի ընդունման մասին դեռ մինչեւ Գրիգորի ձեռնադրումը Կեսարիայում: Նախ նշենք, որ վրացական պատմագրութիւնն անուշադրութեան է մատնել «Գրիգորի վարք»-ի վկայութիւնները՝ փոխարէնը շեշտը դնելով V դարի հռոմէացի հեղինակ Գեղասիոս Կեսարացու մի պատմութեան վրայ, որը պահպանուել է Ռուփինոսի մօտ՝ հետագայում կրկնուելով նաեւ Սոկրատ Սքոյաստիկոսի եւ այլոց երկերում (Գեղասիոսը լսել էր այդ պատմութիւնը ոմն Բակուրից, որը

<sup>1</sup> Stéu Garitte G., *Documents pour l'étude du livre d'Agathange*, p. 101-102.

<sup>2</sup> Հմմ. Անանեան Հ. Պ., Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 68-78:

<sup>3</sup> Акопян А.А., *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, с. 126.

<sup>4</sup> Stéu Garitte G., *Documents pour l'étude du livre d'Agathange*, p. 95; Н. Мapp, *Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием*, с. 130-131; Жамкочян А.С., *Житие св. Григория Просветителя Армении...*, Ер., 2015, с. 177. Հմմ. Ծօմոն Մ.-Լ., Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը Կեսարիայում եւ մկրտութիւնը Բագաւանում, սգ. 10 (ծնթ. 20. «Լստ արաբական տարբերակի տեղեկութեան՝ Գրիգորն այս եկեղեցիներում սեղաններ է կանգնեցնում, որոնք օծում է Սեբաստիայի եպիսկոպոսը»):

IV դ. վերջերի անձնաւորութիւն էր՝ Վրաց թագաւորական տոհմից): Վրացի գիտնականներն օգտագործում են նաեւ «Քարթլիս Յիստօրեա»-ի ուշ ծագած պնդումները, ըստ որոնց՝ երկրի լուսաւորիչ Նունէ միանձնուհին նախապէս ապրել է Երուսաղէմում, մի փոքր էլ՝ Մովսէս խորենացու տարբերակը եւ իրենց դարձը վերագրում են 330-ական թթ. (Իւանէ Զաւախիշւիլուն յանգող աւանդաբար շրջանառուող տարեթիւր 337-ն է)<sup>1</sup>: Այնինչ՝ «Գրիգորի վարք»-ի յայտնաբերումից յետոյ պարզ է, որ դա պիտի յետ տաւուի գոնէ մինչեւ 315 թ.:

Արդ, Մովսէս խորենացին իր Բ.86 գլխում («Յաղագս Նունէի երանելոյ, եթէ որպէս եղև պատճառք փրկութեան Վրաց» վերտառութեամբ) պահպանել է որոշակի հաւաստիութիւն ներշնչող այնպիսի տեղեկութիւններ, որ, թերեւս, ստիպուած ենք Վրաց դարձը հասցնել մինչեւ նոյն 311-ը եւ թուագրել ընդամենը շաբաթներով անց Գրիգորի «Ելն ի վիրապէս»-ից: Այսպէս, Պատմահայրը գրում է. «Եւ իսկոյն եհաս առ նա [=Վրաց թագաւոր Միհրանին] լուր սքանչելեացն, որ եղեն ի Հայս ի թագաւորն եւ ի նախարարն, եւ գրնկերացն երանելոյն Նունեայ...»<sup>2</sup>: Մի փոքր անց՝ «...յիշեաց [=Միհրան], զոր լուաւն վասն Տրդատայ, եթէ ի ճանապարհ երեալ, կամելով յորս գնալ՝ հասին նմա հարուածք ի Տեառնէ. զոր համարեցաւ, թէ եւ նմա այնպիսի ինչ դիպելոց է...»<sup>3</sup>: Եւ քիչ անց՝ «Իսկ երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս՝ յղեաց առ սուրբն Գրիգոր, եթէ զի՞նչ հրամայեսցէ նմա գործել այնուհետեւ, քանզի յաւժարութեամբ ընկալան Վիրք զքարոզութիւն Աւետարանին: Եւ հրաման ընդունի՝ կործանել զիւռան, որպէս ինքն արար, եւ կանգնել զպատուական նշան խաչին մինչեւ ցաւր տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա»<sup>4</sup>: Այս բնագրերի բնորոշ մանրամասներին (ընդգծուած) երեւում է, որ Վրաց լուսաւորիչ արքայ Միհրան-Միրիանի հակումը դէպի Հռիփսիմեանների ընկե-

<sup>1</sup> Տե՛ս, օր.՝ *Очерки истории Грузии*, Т. 2, Тбилиси, 1988, с. 25-31. Լմմ. Գալթթայան Է. Վ., *Վիրքի քրիստոնէացումը. Հայկական դարձերես*, – «ՎԷՄ» համահայկական հանդես, Ե(ԺԱ) տարի, 2013, թիվ 3, էջ 21-50:

<sup>2</sup> Խոր., Բ.86, էջ 232:

<sup>3</sup> Նոյն տեղում:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 232-233: Գլխի վերջում Պատմափոս ամփոփումն է. «[Նունէն] առաքելուի տղեպ՝ քարոզեաց ի Կղարջաց սկսեալ առ դրամքք Այլանաց եւ Կապից մինչեւ ի սահման Մաքթթաց, որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (էջ 234):

րակից Նունէ միանձնուհու քարոզած կրօնը (որսի պահի մի դիպուածի արդիւնքում) տեղի է ունեցել Վաղարշապատում Հռիփսիմեանների նահատակութիւնից եւ Տրդատ Մեծի՝ ճշմարիտ հաւատքի գալուց ոչ շատ անց: Ուշագրաւ է, որ «Քարթլիս Ցխովրեբա»-ն տալիս է Միրիանի որսի օրը՝ 20 Յուլիսի (այսինքն՝ ստացւում է «Ելն ի վիրապէ»-ից մի քանի շաբաթ յետոյ):

Արդ, եթէ ասուածի հիման վրայ Վրաց դարձը եւս թուագրենք 311-ով, պարտաւոր ենք արդեօք նոյնը պնդել նաեւ Աղուանքի եւ Լազիկայի մասին: Թւում է, թէ՛ ոչ: Նախ, վերջիններիս համար նոյնանման փաստեր չեն պահպանուել, բացի այդ, կարող ենք զուգորդաբար համեմատել նաեւ գրերի ստեղծման պատմութեան հետ V դ. սկզբներում, երբ նմանատիպ ծրագրի շրջանակներում Աղուանքում ամեն ինչ քիչ աւելի ուշ կատարուեց, քան Վիրքում: Այսպիսով, աւելի հաւանական է մնում 315 թուականը (գուցէ՛ այդ նոյնը ենթադրելով նաեւ Լազիկայի համար): Տրամաբանօրէն դա կարելի է վերագրել նաեւ 313 թ. կամ 314-ի սկզբին, երբ Աղուանից արքան ստացել էր Տրդատի հրահրն ու այցելել Լայաստան, այսինքն՝ տրամադրուել էր այցելութեան բուն նպատակին դարձին:

Ինչպէս նշեցինք վերելում, չնայած քրիստոնէութիւն ընդունած Աղուանից թագաւորն, ամենայն հաւանականութեամբ, եղել է Վաչագան Ա Քաջ Արշակունին, սակայն ուշ աւանդոյթը դա կապել է այլ հայ պատմիչների եւս ծանօթ Ուռնայր արքայի անուան հետ: Աղբիւրագիտական նրւթի պակասի հետեւանքով հնարաւոր է միայն ենթադրութիւններ անել վերջին առասպելի առաջացման հանգամանքների մասին: Տրամաբանօրէն այն կարող էր առաջանալ մի այնպիսի պահի, երբ անհրաժեշտութիւն էր զգացուել Աղուանքի քրիստոնէացման մասին հաւաստի տեղեկութիւնների կորստի պայմաններում բանաձեւել երկրի լուսաւորութեան հանգամանքները առաքելական կամ (եւ) լուսաւորչական ժամանակներում: Ամեն եկեղեցու համար կարելոր նման ծրագրային բանաձեւումները ենթադրել են այնպիսի մանրամասների արձանագրում, ինչպէս լուսաւորիչ արքայի (կամ այլ աշխարհիկ տիրակալի) եւ առաջին հովուապետի (առաքեալի կամ կաթողիկոսի) անունները: Այդպիսիք եթէ աղբիւրները կամ պատմական յիշողութիւնը չէին պահպանել, ուրեմն պիտի յօրինուէին առկայ հնարաւորութիւնների սահմաններում<sup>1</sup>, եւ ենթադրելի է, որ VII դ. ընթացքում Ա-

<sup>1</sup> Եկեղեցական առասպելների առաջացման եւ գործառնման (վաճակաւն յիցաբանութիւն) առանձնապատկութիւնների մասին մանրամասն տե՛ս

ղուանից եկեղեցում նման եղանակով են ստեղծուել Ս. Թադէոսի աշակերտ Եղիշայ առաքելի եւ Ուռնայր Թագաւորի «ծրագրային» առասպելները:

Նշենք, որ իր հիմնական միտումով Ուռնայրի առասպելը, գոնէ սկզբնապէս, չէր տարբերուէ Աղուանքի քրիստոնէացման իրական պատկերից: Այն շեշտում է, որ երկիրը լուսաւորուել է շնորհիւ Հայաստանում Գրիգոր Լուսաւորչի կատարած հրաշագործութիւնների («Առնու եւ զվերստին ծնունդն ի սրբոյն Գրիգորէ՛ Հայոց Լուսաւորչէ եւ գայ լուսազգեստեալ ի Հոգւոյն Սրբոյ, առուել լուսաւորէ զԱղուանս: ... սակս մեծաաքանչ գաւրութեանն, որ կատարեցաւ ի Հայք [ի Հայս]»<sup>1</sup>): Թագաւորի մահից յետոյ խնդրել են իբրեւ Աղուանքի «առաջին կաթողիկոս» Լուսաւորչի Թոռանը՝ պատանի Գրիգորիսին. «Իսկ զկնի մահուանն սորա [sic! = 373 Թ.] խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց»<sup>2</sup>: Որոշ գծերով այս համագաղափարը (կոնցեպցիա) նմանուում է Մովսէս Խորենացու մօտ պահպանուած

---

**Սահակյան Ա. Ս.**, «Պատմութիւն Հացունեաց խաչին» գրույցը եւ նրա տիպաբանութիւնը, – ՊԲՀ, 1981, հ<sup>տ</sup> 4, էջ 153-166:

<sup>1</sup> **Դասլաւ.** Ա.9, էջ 14-15, տողատակ: Այս հատուածում հնագոյն *a* ձեռագրում XVIII դ. դպիր Ղունկիանոսն «նողումներ» է կատարել, որոնք թէւ պատմական հաւաստի փաստերին վերադառնալու միտում են ունեցել, բայց բնագրագիտօրէն աղճատել են Դասխտրանցու բնագիրը, որի մասին կարող ենք դատել *a*-ից 1730-ական թթ. արտագրուած // ձեռագրի ընթերցումներից (Հակոբյան **Ա.**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*, – «Բանբեր Մատենադարանի», 15, Եր., 1986, էջ 113; **Акопян А.А.**, *Албания-Алуанк*, с. 152-153). *a*-ի այլեւայլ լետնամոյծ թերիները նկատած իս. վրդ. Դարեանը հրատարակել է նաեւ 1676 թ. - նորոգման պահին կորսուած մի թերթի բնագիրը Բ խմբի գրչագրերից (**Խ. Վ.**, *Մովսէս Կաղանկատուացու Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյ Մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակները*, – «Արարատ», 1895, էջ 235-238, 333-348, 388-390, 424-426): *a*-ի այդ թերի վիճակից XVIII-XIX դդ. շատ արտագրութիւններ են արուել, որոնք էլ հիմք են ծառայել երկար շրջանատուած՝ 1860 թ. Մովսէսյի ու Փարիզի տպագրերի եւ 1861 թ. ռուսերէն թարգմանութեան համար: Ցաօք, XVIII դ. «նողումած» բնագիրն է հիմք ընդունուել նաեւ 1983 թ. քննական հրատարակութեան մէջ, թէպէտ ճշտումներն արուած էին արդէն 1961 թ. անգլերէն թարգմանութեան մէջ (հմմ. *The History of the Caucasian Albanians* by **Movsès Daxuranci**. Translated by **C.J.F. Dowsett**, London, 1961, p. XIV).

<sup>2</sup> **Դասլաւ.** գլ. Ա.թ, էջ 14-15:

Վրաց աշխարհի լուսաւորութեան պատմութեանը Նունէի եւ Միհրան թագաւորի ջանքերով: Օր.<sup>1</sup> «Վասն որոյ հարցեալ զնա Միհրանայ, ... իսկոյն եհաս առ նա լուր սքանչելեացն, որ եղեն ի Հայս ի թագաւորն եւ ի նախարարն, եւ զընկերացն երանելոյն Նունեայ»<sup>2</sup>: Այս ենթադրութեան շրջանակում հնարաւոր է վերականգնել VII դ. առաջին տարիների այն իրավիճակը, երբ Հայոց կաթողիկոսութիւնն իրենից անկախացման ուղին որդեգրած Վրաց Կիւրիոն կաթողիկոսին համոզում էր պահել աւանդական կարգավիճակը, ի թիւս այլ պատճառաբանութիւնների յղում էր անում պատմական փաստարկումներին եւ պարբերաբար զուգահեռ բերում Աղուանից կաթողիկոսութեան ենթակայութեան հանգամանքը: Հէնց այս ժամանակ պիտի փորձեր լինէին՝ պատմական ճշգրտումներ կատարելու ոչ միայն Վրաց, այլեւ Աղուանից երկրի լուսաւորութեան հանգամանքների վերաբերեալ, որի արդիւնքում էլ, թերեւս, առաջացել է **Լուսաւորչի օրօք** Աղուանքը քրիստոնէացնելու պատմութիւնը **Ուռնայրի կողմից**, որը միակ անունով յայտնի արքան էր (Նորենացուց եւ Փաւստոսից): Իհարկէ, Մովսէս Դասխուրանցու արձանագրած վիճակով՝ Ուռնայրի առասպելն արդէն լրացուած է ինչ-ինչ տարրերով, որոնցով այն «Հարստացուել է» աւելի ուշ կամ հէնց X դ. պատմիչի գրչի տակ եւ որոնք պիտի այդ առասպելը ձառայեցնէին Աղուանից եկեղեցու բացարձակ ինքնագլխութեան միտումներին<sup>2</sup>:

Ի դէպ, Ուռնայրի մասին տեղեկութիւնները շարադրուած են ոչ միայն Դասխուրանցու գրչին պատկանող Ա.9 գլխում կամ յաջորդող գլուխների առանձին արտայայտութիւններում<sup>3</sup>, այլեւ բաւական մանրամասն՝ Ա.11 գլխի սկզբում, որը X դ. հեղինակի կողմից բառացի արտագրուած մի երկ է՝ «Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի

<sup>1</sup> Խոր., Բ.86, էջ 232:

<sup>2</sup> Օր.<sup>1</sup> «եւ այսք ի միում ժամանակի եղեն հրաշք յաստուածուստ»: «ո՛չ թէ ի հարկէ ինչ կամ թէ աւագ գոլ գՀայս քան գԱղուանս հաշուեցան, այլ սակս մեծաւքանչ գարրութեանն, որ կատարեցան ի Հայս, եղեւ սոցա կամսս հնագանդել արժանաժառանգ գարմին սրբոյն Գրիգորի. կոչեցին եւ հանեցան»:

<sup>3</sup> Օր.<sup>1</sup> Ա.10 գլխում, որն ամբողջապէս արտագրուած է Եղիշէ պատմիչից. «Զի էր նա [=Վասէ թագաւորը] անցա քեռորի եւ յառչ լեալ էր քրիստոնէայ քստ հպրեանական ասանիւն, գոր Ուռնայրն հաստատեաց, եւ անարէնն Յագկերտ արար բռնութեամբ զնա մոգ»: Ընդգծուած բառերն այստեղ Դասխուրանցու յաւելումն են Եղիշէից քաղած հաստատմին:

առ սուրբն Վաչէ» վերտառութեամբ<sup>1</sup>: Նրա լեզուաոճական առանձնայատկութիւնների քննութիւնը թոյլ է տալիս չկասկածել, որ դա իրօք V դ. երկրորդ կէսի երկ է (բաւական զուգորդուած Եղիշէի պատմութեան լեզուին ու ոճին), բայց կասկած է յարուցում նրա սկզբում Ուոնայր թագաւորի յիշատակութիւնը, իբրեւ Աղուանքը բրնաձեւէլու Աղուանից դարձի պատմութիւնն անգամ թագաւորի անունը յօրինելու պայմանով, իսկ այդ ժամանակից քիչ անց Ուոնայրի իբրեւ Աղուանից լուսաւորիչ թագաւորի պատմութիւնն անտեսել էր «Վաչագանի վէպ»-ի հեղինակը: Նման լուծումը հաւանական համարուել չի կարող, փոխարէնը՝ Վաչէին ուղղուած թղթում բերուած դարձի պատմութեան մանրամասների քննութիւնը յուշում է այլ հնարաւոր լուծում: Գիւտի ներկայացրած քրիստոնեացման պատումն իր գլխաւոր գծերով համընկնում է Աղուանից դարձի իրական պատմութեան հետ, որը շարագրել է Լուսաւորիչ մեծագործութիւնների ատակել հաւաստի ամփոփած «Գրիգորի վարք»-ը: Ինչպէս տեսանք, ըստ «Վարք»-ի՝ Հայոց արքայ Տրդատի կրտսեր դաշնակից Վրաց, Աղուանից եւ Լազերի թագաւորները ժամանել են Հայաստան, հայ աւագանու հետ Գրիգորին ձեռնա-

<sup>1</sup> Հնմ. АКОПЯН А. А., *Албания-Алуанк*, с. 202. Գիւտ Արախեզացու Թղթի քննական բնագիրը հրատարակել ենք «Մատենագիրք Հայոց» ժողովածոյի հտ. Ա-ում (Աճթիլիսա, 2003, էջ 1075-1090): Թուրքն ամբողջապէս ջատագովակւան է. թեղիմակը մանրամասն եւ բարձր ոճով գովաբանում է յանուն քրիստոնէութեան Սասանեանների դէմ ապստամբած Աղուանից արքայ Վաչէին եւ յորդորում նրան հաւատարիմ մնալ զոհողական պահուածքին: Այն որեւէ տեղեկութիւն չի յայտնում 459-461 թթ. ապստամբութեան մասին, որի միակ աղբիւր մնում է Եղիշէի պատմութեան դրուագը (Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Եր., 1957, եղանակ է, էջ 197-199): Ի դէպ, մանրամասն շարադրելով Աղուանից ապստամբութեան պատմութիւնը՝ Եղիշէն չի տալիս թագաւորի անունը: Դասխտրանցին բառացի ընդօրինակել է նրա հատուածը իր Ա. 10 գլխում՝ աղբիւրի մասին լղում չտալով եւ անելացնելով թագաւորի անունը՝ «Վաչէ»: Պարզ է, որ այդ անունը նա գիտեր շնորհի «Վաչագանի վէպ»-ի եւ Գիւտ Արախեզացու «Թղթի»:

դրուելու ճանապարհէն Կեսարիա, ապա նրա ձեռքով մկրտուել Արաժանիի ջրերում (315 թ. գարնան վերջին), որից յետոյ Լուսաւորիչը եպիսկոպոսներ է ուղարկել այդ երկրներ, այդ թւում՝ «բարեպաշտ այր Թովմային՝ Սասալա փոքր քաղաքից [Θωμάς ὁσιον ἄνδρα. ἐκ τῆν Σαταλέων τῆς μικρᾶς πόλεος]» Աղուանք<sup>1</sup>: Գիւտի Թղթում եւս ասում է, որ Աղուանից թագաւորն իր նախարարների ու **գորքի** հետ միասին եկել է Հայոց Տրդատ արքայի մօտ եւ 40-օրեայ պահքից յետոյ մկրտուել սուրբ **Ջրում** Գրիգոր Լուսաւորչի ձեռքը («...էջ թագաւորն յամենասուրբ **Ջուրն** եւ ամենայն **գաւրքն** ընդ նմա»), ապա շարունակուում է. «ի նմին ժամանակի շնորհեցաւ նոցա այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի **Հռոմ** քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքային: Այսու երկնաւոր բարեաւք եկն Ուռնայր արքայ, եմուտ յաշխարհդ Աղուանից, ուսոյց եւ կատարեաց զնոսա առաքելական կանոնաւք»<sup>2</sup>: Համապատասխանութիւնը «Վարք»-ի հաղորդածի հետ ակնյայտ է, եւ Ուռնայրի անուան յիշատակութիւնը հէնց այդ պատճառով՝ ակելի հակասական: Տուեալ հակասութիւնը ժամանակին պատճառ է եղել Ն. Ակինեանի համար՝ անհաւաստի համարելու ամբողջ Գիւտի Թուղթը իբրեւ VII կամ VIII դարերում ստեղծուած<sup>3</sup>: Սակայն ներկայումս ակելի հաւանական է ենթադրել, որ անհաւաստի է ոչ թէ Թուղթը, այլ միայն նրանում Աղուանից թագաւորի «Ուռնայր» անուան օգտագործումը (երիցս): Թերեւս, VII դարից յետոյ, երբ Աղուանից դարձն արդէն «պաշտօնապէս» կապուել էր Խորենացու մօտ IV դարի կտրուածքում յիշուած միակ Աղուանից թագաւորի՝ Ուռնայրի հետ, վերջինիս սրբացուած անունը ինչ-որ մի ուսեալ գրչի կողմից մուծուել է Գիւտի Թղթի բնագիր: Դա կատարուել է կամ իրական թագաւորի առկայ անուան փոխարէն, կամ՝ այդպիսի անուան բացակայութեան պարագայում. պարզ է, որ եթէ բնագրում եղած լինէր Աղուանից լուսաւորիչ արքայի անունը, ապա դա պիտի լինէր Վաչագան Քաջը, ինչպէս որ երեւում է «Վաչագանի վէպ»-ի տոհմաբանական տեղեկութիւնները ժամանակագրորէն դասաւորելու արդիւնքում:

<sup>1</sup> St' u Garitte G., *Documents pour l'étude du livre d'Agathange*, p. 101-102.

<sup>2</sup> Գլոխ Ա.11, էջ 19-20:

<sup>3</sup> Ակինեան Հ. Ն., *Մովսէս Դասխուրյանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից*, Վիեննա, 1970, էջ 97-98, 115: Տաւօր, Առյճն Էր Գաւն սէր գրքում (Акопян А.А., *Албания-Алуанк*, с. 126-127, 182-184).